13/02
Տարեվ. op.
→20/02/19P

BUSINESS CONSULT

Հայաստանի Հանրապետություն
Իրավ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 19
Գործ. հասցե՝ Հանրապետության 22
Հեռ. 0037410- 562-404
Էլ. փոստ՝ info@bc.am

04.02.2019թ.
N 03

Հայաստանի Հանրապետության Վարչապետ
պարոն Նիկոլ Փաշինյանին

ք.Երևան 0010, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1

Մեծարգո պարոն Վարչապետ,

Ձեզ ենք դիմում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունում (այսուհետ՝ «Նախարարություն») տիրող իրավիճակի և դրա պատճառով մեր կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքներում ստեղծված անորոշությունը կարգավորելու ակնկալիքով:

Նախապատմություն.

Համաձայն ՀՀ գնումների մասին օրենսդրության՝ 23.02.2018թ-ին «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի և «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի միջև կնքվեց «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») կարիքների համար հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման պետական գնման N ՇԱԻ-ԳՀՁԲ-18/1 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր»):

Համաձայն տվյալ Պայմանագրի 7.13 կետի՝ «Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան Համաձայնագրի կնքման միջոցով: .... »: Սույն կետով սահմանված «ֆինանսական միջոցների առկայությունը» վերաբերում է Ընկերության ֆինանսական միջոցներին:

Համաձայն վերը հիշատակված Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 Հավելվածի՝ Պայմանագրի գործողության ժամկետն է Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 30.12.2020թ-ը: 2018թ-ի համար թիվ 1 Համաձայնագիրը կնքվել է 23.02.2018թ-ին: Տվյալ Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտին պետք է հաջորդեր թիվ 2 Համաձայնագրի կնքումը: Սակայն առ 04.02.2019թ-ը, Ընկերությունում բավարար ֆինանսական միջոցների առկայության պայմաններում, գլխավոր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ստեփանյանը, առանց որևէ պատճառաբանության, հրաժարվում է կնքել 2019թ-ի համար ծառայությունների մատուցման Համաձայնագիրը, ինչը հակասում է գործող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

Առկա իրավիճակ

2019թ-ի համար Համաձայնագրի բացակայության պատճառով հնարավոր չէ էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի և գրքերի կառավարման համակարգով (e-Invoicing) դուրս գրել հաշիվ-ապրանքագիրը և Ընկերության հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցումն իրականացնող հինգ աշխատակիցներին վճարել իրենց հասանելիք աշխատավարձերը:

515- 913

BUSINESS
CONSULT

Նշված հարցի կարգավորման համար 14.01.2019 թ-ին թիվ 02 գրությամբ դիմել ենք ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի պաշտոնակատար պարոն Տիգրան Խաչատրյանին, որով խնդրել ենք, որպեսզի պարոն Խաչատրյանը պարտավորեցնի Ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնակատար Հայկ Ստեփանյանին՝ կատարելու Պայմանագրով ստանձնած պարտավորությունը, այն է, ողջամիտ ժամկետում կնքելու 2019թ-ի համար ծառայությունների մատուցման Համաձայնագիրը կամ գրավոր հիմնավորելու չկնքման իրավական պատճառները:

Գրությունը Նախարարությունում մուտքագրվել է 14.01.2019թ-ին ժամը 13:00–ին: Հարցի կարգավորման համար գրությունը մակագրվել է Ժաննա Զաքարյանին, որի կատարման համար վերջնաժամկետ է սահմանվել 29.01.2019թ-ը: Բազմիցս դիմել ենք Ժաննա Զաքարյանին՝ տեղեկանալու վերոհիշյալ գրության ճակատագրի մասին, սակայն վերջինս հեռախոսով մեզ հայտնել է, որ դեռևս չի ստացվել «Վերևների» պատասխանը, և երբ որ այն լինի, մեզ այդ մասին կտեղեկացնեն: Անհասկանալի է, թե որն է «Վերևներից» տեղեկություն ստանալու «երբ որ լինի» չափանիշը. գուցե այդ նույն «Վերևներն» են, որ ուղղորդում են Հայկ Ստեփանյանին չկատարել Ընկերության պայմանագրային պարտավորությունը, այն է, չստորագրել վերը հիշատակված Համաձայնագիրը:

Նախարարի քարտուղարուհու կողմից, նախարարի խիստ զբաղվածության պատճառաբանմամբ, մերժվել են նաև նախարարի հետ հանդիպում նշանակելու մեր բազմաթիվ խնդրանքները՝ անձնապես նախարարին տեղեկացնելու և նրա ուշադրությունը սևեռելու իր աշխատակազմի աշխատելառճի վրա:

Մեծարգո պարոն Վարչապետ,

Հարցի կարգավորման հրատապությունը ստիպում է մեզ դիմել Ձեր միջամտությանը՝ խնդրելով պարտավորեցնել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ենթակայության ներքո գործող «Ձափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ Ընկերության տնօրենին՝ կատարելու Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունը՝ ստորագրելու Համաձայնագիրը, կամ գրավոր հիմնավորելու չկնքման իրավական պատճառները:

Կանխավ շնորհակալություն:

Տնօրեն
Լևոն Թոփուզյան

ՀԳ. Անհրաժեշտության դեպքում պատրաստ ենք ներկայացնել նամակում հիշատակված փաստերի փաստաթղթային հիմնավորումները: